

## «SMS-ԻՆՖՈ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

### ԴԻՄՈՒՄ

#### «SMS-ինֆո» ծառայության տրամադրման

ք. Երևան

Ամսաթիվ՝ \_\_\_\_ / \_\_\_\_ /20\_\_ թ

<b>ՀԱՃԱԽՈՐԴ</b>	
ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՇՎԵՀԱՄԱՐՆԵՐԸ	
ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ	

Ցանկանում եմ վերը նշված բջջային հեռախոսահամարին ուղարկող SMS հաղորդագրության/ների (կարճ տեքստային հաղորդագրություն) միջոցով տեղեկանալ՝

- Վարկ(եր)ի մարման մասին նախորդ օրը **ներառյալ մարման ենթակա վարկի գումարը,**
- Վարկ(եր)ի մարման մասին նախորդ օրը **առանց մարման ենթակա վարկի գումարի,**
- Ավանդ(ներ)ի մարման մասին նախորդ օրը,
- Մակագներում և պայմաններում փոփոխությունների մասին:
- Բանկի կողմից մատուցվող ընթացիկ և նոր ծառայությունների մասին ծանուցում/գովազդ:

Սույնով Հաստատում եմ, որ ծանոթացել եմ «Հաճախորդների բանկային հաշիվների բացման և այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններին» և համաձայն եմ դրանց հետ:

Ստորև իմ ստորագրությամբ հաստատում եմ Բանկի հետ «SMS-ինֆո» ծառայության սպասարկման պայմաններով պայմանագրի կնքման փաստը:

**ՀԱՃԱԽՈՐԴ**

հաճախորդի լրիվ անվանումը

գտնվելու վայրը / հասցեն/

հեռախոս, ֆաքս, այլ տվյալներ

Էլ. փոստ

### **Ուշադրություն.**

**Հարգելի Հաճախորդ, SMS հաղորդագրությունները պաշտպանված չեն և նրանց բովանդակությունը կարող է հասանելի լինել երրորդ անձանց (հեռախոսային օպերատորներ, և այլն): Խորհուրդ է տրվում անմիջապես ջնջել ստացված հաղորդագրությունները դրանք կարդալուց հետո:**

## SMS-ԻՆՖՈ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Սույն պայմաններով Բանկն իրականացնում է Հաճախորդին SMS-ինֆո ծառայության մատուցում, որի միջոցով Հաճախորդը հնարավորություն է ստանում կարճ տեքստային հաղորդագրության (այսուհետ՝ SMS հաղորդագրության) միջոցով ստանալ տեղեկատվություն ինչպես իր ընթացիկ, ավանդային և վարկային և այլ հաշիվների, այնպես էլ Բանկում կատարված սակագնային և այլ պայմանների փոփոխությունների մասին:
2. Ստորագրելով Բանկի կողմից հաստատված SMS-ինֆո ծառայությանը միանալու դիմումը Հաճախորդը հաստատում է, որ ծանոթացել է սույն պայմաններին, գիտակցում և ընդունում է SMS հաղորդագրությունների պաշտպանվածության համեմատաբար ցածր մակարդակը և պատասխանատվություն է կրում այլ անձանց համար իր հեռախոսի անհասանելիության պահովման, իր կողմից որևէ կասկածի դեպքում Բանկին տեղեկացման, ինչպես նաև կարողացնում անմիջապես հետո Բանկի կողմից ուղարկված հաղորդագրությունների հեռացման համար:
3. Բանկի կողմից մատուցվում է SMS-ինֆո ծառայության երկու տարատեսակ.
  - ա) **Նախազգուշացնող հաղորդագրություններ (Alert service):** Հաճախորդի ընտրությամբ պարբերականության սկզբունքով հաճախորդին են ուղարկվում այնպիսի տեղեկություններ ինչպիսիք են վարկ(եր)ի, ավանդ(ներ)ի մարումների կամ Բանկի սակագնային փոփոխությունների մասին:
  - բ) **Հաճախորդի նախաձեռնությամբ ուղարկվող հաղորդագրություններ (Pull service):** Հաճախորդի նախաձեռնությամբ Բանկի կողմից տրամադրված կարճ համարին ուղարկվում է նախօրոք սահմանված և Հաճախորդին տրամադրված լատինատառ բառ (տառակապակցություն), ինչի հիման վրա Բանկն ուղարկում է տվյալ բառին համապատասխանող տեղեկատվությունը:

Վերոնշյալ լատինատառ բառերի (տառակապակցությունների) ցանկը սահմանվում է Բանկի կողմից նախօրոք և տրամադրվում Հաճախորդին ըստ պահանջի:

SMS-ինֆո ծառայության մատուցման դիմումը ստորագրելով Հաճախորդները հաստատում են, որ ծանոթացել են Հաճախորդների նախաձեռնությամբ ուղարկվող հաղորդագրությունների համար կարճ հեռախոսահամար տրամադրող ընկերության (օպերատորի) կողմից սահմանված սակագնին:
4. Բանկը պարտավոր է՝
  - ա) SMS-ինֆո ծառայությանը միանալու դիմումը ընդունելու պահից 2 բանկային օրվա ընթացքում ակտիվացնել վերոնշյալ ծառայությունը Հաճախորդի համար՝ նրան ուղարկելով համապատասխան բովանդակությամբ հաղորդագրություն:
  - բ) Հաճախորդի գրավոր կամ բանավոր (Հաճախորդի նույնականացումն իրականացնելուց հետո) դիմումի հիման վրա ժամանակավորապես դադարեցնել SMS-ինֆո ծառայությանը:
  - գ) SMS-ինֆո ծառայությանը տրամադրման պայմաններում որևէ փոփոխության դեպքում այդ մասին առնվազն 30 (երեսուն) օր առաջ պատշաճ կերպով տեղյակ պահել Հաճախորդին:
5. Բանկն իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել SMS-ինֆո ծառայության մատուցումը Հաճախորդին, եթե Հաճախորդն ունի բանկային հաշիվների վարման և սպասարկման սակագներով նախատեսված չվճարված գումար:
6. Հաճախորդը պարտավոր է՝
  - ա) անհապաղ տեղյակ պահել Բանկին հեռախոսահամարի կորստի կամ փոփոխության մասին, ինչպես նաև հավաստիանալ, որ Բանկում գործում է իր կողմից տրամադրված ճիշտ հեռախոսահամարը, քանի որ սխալ հեռախոսահամարի տրամադրման դեպքում կարող է հրապարակվել բանկային գաղտնիք պարունակող տեղեկատվություն, ինչի համար Բանկը պատասխանատվություն չի կրի:
  - բ) վճարել Բանկին՝ համաձայն Բանկային հաշվի բացման և վարման պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Սակագների և Պայմանների,
7. Հաճախորդն իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել SMS-ինֆո ծառայությունը կամ հրաժարվել դրանից ներկայացնելով գրավոր կամ բանավոր (Հաճախորդի նույնականացումն իրականացնելուց հետո) դիմում:
8. SMS-ինֆո ծառայությունը հանդիսանում է բանկային հաշիվների սպասարկման տարր և դադարեցվում է հաշվի (հաշիվների) սպասարկումը դադարեցնելուն (հաշիվը (հաշիվները) փակվելուն) պես:
9. Բանկն իրավունք ունի դադարեցնել SMS-ինֆո ծառայությունը այդ մասին առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացնելով Հաճախորդին: